



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օպտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1923

Գրությաններ բոլոր յարկածերի, միացիւմ

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դասախոսություն Սվերդլովի համալսարանում
1919 թ. հունիսի 11-ին

ՀԻ ԱԽ
ԽՍՏՈՒԵԼ
Ակադեմիա Նաу.
СССР

3K 23

Դ-50

ԿԱՐՈՍ ԿԱՐՈՍ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1932

01 JUN 2005

Ա 281

ՅԿ 23
Դ-50

Պրոլետարներ բռլոր յերկիքների, միացնել.

-4 NOV 2005

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դասախոսություն Ավելցվովի համալսարանում
1919 թ. հունիսի 11-ին

ՇԽԵԼԻ ՀԱՆՈՒ
Института
ПОВТОНОВДЕНИЯ
Природных Наук
СССР



ՀՀ-1981

11 SEP 2013

7923

Ընկերներ, ըստ այն սլանի, վորը ձեզ մոտ ընդունված
է և ինձ հաղորդվել է, այսորվա մեր զրուցի առարկան հան-
գիսանում և պետության հարցը: Յես չգիտեմ, թե վորչափով
դուք աբդեն ծանոթ եք այդ հարցին: Յեթե չեմ սխալվում՝
ձեր դասընթացները նոր միայն բացվել են, և ձեզ վիճակվում
ե առաջին անգամ սիստեմատիկաբար մոտենալ այդ հարցին:
Յեթե այդ այդպիս ե, ապա շատ կարող ե պատահել, վոր
ինձ չհաջողվի այդ դժվար հարցի մասին առաջին դասախո-
սության մեջ անել այնպես, վորպեսզի շարադրումը լինի բա-
վականաչափ պարզ և ըմբռնելի ունկնդիրներից շատերի հա-
մար: Յեվ յեթե այդպիս ել լինի, ապա ինդրում եմ ձեզ դրա-
նից չչփոթվել, վորովհետեւ պետության հարցը ամենաբարդ,
տմենադժվար հարցերից մեկն ե և հայիլ թե ամենից ավելի
շատ չի խճճվել բուրժուական գիտնականների, գրողների ու
փիլիսոփանների կողմէց: Ուստի և յերբեք չպետք ե սպասել,
թե հնարավոր կլինի կարծ զրուցի միջոցով, միանգամից
ստանալ այդ հարցի լրիվ պարզաբանումը: Այդ մասին առա-
ջն զրուցը լսելուց հետո անհրաժեշտ է իր մոտ նշանակել
անհասկանալի կամ վոչ պարզ տեղերը, դժանց յերկրորդ՝
յերրորդ և չորրորդ անգամ դառնալու համար, վորպեսզի
այն, ինչ մնացել է անհասկանալի, լրացվի և ել ավելի պարզ-
վի այնուհետև, հետադարձում, ինչպես ընթերցանությամբ,
այնպես ել առանձին դասախոսությունների ու զրուցների
միջոցով: Յես հույս ունեմ, վոր մեզ կհաջողվի մի անգամ ել
հավաքվել, և այն ժամանակ կարելի կլինի բոլոր լրացուցիչ
հարցերի շուրջը կատարել մտքերի փոխանակություն և ստու-
գել, թե ինչ է մնում ամենից ավելի չպարզված: Յես հույս
ունեմ նաև, վոր գուշ, ի լրումն զրուցների ու դասախոսու-
թյունների, վորոշ ժամանակ կնվիրելը Մարգարի ու Ենդելսի
դոնե ամենագլխավոր աշխատություններից միքանիսի ընթեր-
ցանությանը: Կասկած չկա, վոր գրականության գլխացան-



59184-66

կում և այն ձեռնարկներում, վորոնք արամադրված են խոր-
հըրդացին և կուսակցական դպրոցի սովորողներին ձեզ մոտ
յեղած դրագարանում, անկառակ և, վոր գուք այդ դիմավոր
յերկերը կդառնեք, և թեկուզ դարձյալ շարադրման դժբարու-
թյունն այնուամենայնիվ վոմանց միանդամից կարող և և
վախեցնել, պետք և նորից նախազգուշացնել, վոր դրանից
հարկ չկա շփոթվելու, վոր այն, ինչ անհասկանալի յէ առա-
ջին անդամ կարդալիս, հասկանալի կդառնա կրկնակի ըն-
թերցանության զետքում, կամ այն ժամանակ, յերք դուք
հետազաւմ հարցին մոտենաք մի քիչ այլ կողմէց, վորով-
հետեւ կրկնում եմ մի անդամ ել, վոր հարցն այնքան բարդ և
և բուրժուական գիտնականների ու գրողների կողմէց այնպիս
և խճճվել, վոր այդ հարցին՝ յուրաքանչյուր մարդու համար,
վորն ուղղում և այն լրջորեն մտածել և ինքնուրույն կերպով
յուրացնել, անհրաժեշտ և մոտենալ միքանի անդամ, դառնալ
շրան վերաստին և վերսանին, հարցը մտրակել առարկեր կողմե-
րից՝ պարզ և հաստատ ընթանում ձեռք բերելու համար: Իսկ
ձեզ համար այդ հարցին վերադառնալը հեշտ կլինի նրանունք
վոր ամբողջ քաղաքականության մեջ այդ այնպիսի մի հիմնա-
կան, այնպիսի արմատական հարց ե, վոր վոչ միայն այս
պիսի փոթորկալից, հեղափոխական ժամանակ, վորպիսին
ներկայումս մենք ապրում ենք, այլև ամենախաղաղ ժամանակ
իսկ դուք ուղածդ թերթում տեսն մի տնտեսական կամ քո-
ղաքական հարցում միշտ ել կհանդիպեք այն հարցին, թե
ի՞նչ բան և պետությունը, ի՞նչ և նրա եյտթյունը, ի՞նչուն
և նրա նշանակությունը և ինչպիսի վերաբերմունք ունի մեր
կուսակցությունը՝ կապիտալիզմի տապարման համար պայ-
տարող կուսակցությունը, կոմունիստների կուսակցությու-
նը, ինչպիսի վերաբերմունք ունի սա դեպի պետությունը՝
ամեն որ դուք այս կամ այն առիթով անդրադառնարու յիք
այս հարցին: Յեկ ամենից զեմավորն այն ե, վոր չնորհի և
ձեր ընթերցանությունների, զոր ունեք ու դասախոսու-
թյունների, վոր գուք կլսեք պետության մասին, զոր ձեռք
բերեք այս հարցին ինքնուրույն մոտենալու կարողություն,
վորովհետեւ այց հարցին գուք հանդիպելու յիք ամենազան-
գան առիթներով, յուրաքանչյուր մանր հարցում, ամե-
նանասորակելի զուգորդումներով, հակառակորդի հետ զրո-
ցելիս և վիճելիս: Միայն այն ժամանակ, յերք դուք կսովո-

րեք ինքնուրույնարար գլուխ հանել այս հարցից—այն ժամա-
նակ միայն գուք կարող եք ձեղ համարել բավականաչափ
հաստատ ձեր համոզմունքներում, և բավականաչափ հաջող
դրանք պաշտպանել ում հանդեպ ուղում և լինի և յերբ ու-
ղում և լինի:

Այս վոշ մեծ նկատողություններից հետո յիս կանցնեմ
բուն հարցին, թե ի՞նչ ե պետությունը, ինչպիս և նա ծաղել
և հիմնականում ինչ պետք և լինի բանվոր դասակարգի կու-
տակցության, վորը պայքարում և կատարած իզմի լիակատար
տապալման համար—կոմունիստների կուսակցության վե-
րաբերմունքը հանդեպ պետության:

Եւս արդեն ասել եմ, վոր հազիվ թե դանվի մի
ուրիշ հարց, վորը դիտավորյալ թե վոչ դիտավորյալ կերպով
բուրժուական դիտության, փիլիսոփայության, իրավադի-
տության, քաղաքանականության և հրապարականության
ներկայացուցիչների կողմէց այն ասուհճանի խճճված լինի,
վորքան պիտության հարցը: Շատ հաճախ այդ հարցը մինչև
այժմ ել խառնում են կրօնական հարցերի հետ, շատ հաճախ
վոչ միայն կրօնական ուսմունքների ներկայացուցիչները
(սրանցից 40 այդ միանդամայն բնական և սպասել), այլև
մարդիկ, վորոնք իրենց ազատ են համարում կրօնական նա-
խապաշարումներից, պիտության հատուկ հարցը իսանում
են կրօնի հարցերի հետ և շատում են կառուցել—շատ հաճախ
բարդ, դադարիարական փիլիսոփայական մոտեցումով և հիմ-
նավորումով—ուստինք այն մասին, թե պետությունն ինչ-
փոր ասուածային, ինչպար գերբնական բան ե; Վոր այդ
մի տեսակ ուժ ե, վորով մարդկությունն ասվել ե և վորը
մարդկանց տալիս ե կամ տալու յի, իր հետ կրօւմ ե ինչ-վոր
վոչ մարդուց, այլ դրսից նրան տրված բան, վոր այդ ասու-
վածային ծագում ունեցող ուժ ե: Յեկ պետք և ասել, վոր
այդ ուսմունքն այնքան սերտ և կապված շահագործող դասու-
կարգերի՝ կալվածատերերի ու կապիտալիստների շահերի
հետ, այսին և ծառայում նրանց շահերին, այնքան խորն
և ներծծվել պարունայթ բուրժուական ներկայացուցիչների
բալոր սովորույթների, լոլոր հայացների, ամբողջ դիտու-
թյան մեջ, վոր նրա մնացորդներին դուք կհանդիպեք ամեն
քայլափոխում, ընդհուպ մինչև պետության մասին մենշեկե-
ների ու ենթերի ունեցած հայացքում, վորոնք զայրույթով

ժիտում են այն միտքը, վոր իրենք կախում ունեն կրօնական նախապաշարումներից, և վստահ են, վոր կարող են զգաստ նայել պետության վրա: Այս հարցն այդպես խճճված ու բարդացված ե այն պատճառով, վոր այն (այդ տեսակետից զիջելով միտքն անտեսական դիտության հիմունքներին) տիրող դասակարգերի շահերը շոշափում ե ալելի, քան վորեւ մի ուրիշ հարց: Պետության ուսմունքը ծառայում ե իրեւ արդարացում հասարակական արտօնությունների, արդարացում շահագործման գոյության, արդարացում կապիտալիզմի գոյության, —ահա, թե ինչու այս հարցում սպասել անաշուության, այս հարցում գործին մոտենալ այնպես, վոր իր թե գիտականության հավակնություն ունեցող մարդիկ կարող են այսուղ ճեղ տալ անալյարտ գիտության տեսակետը, —այդ խոշորագույն սխալ կլինի: Պետության հարցում, պետության ուսմունքի մեջ, պետության թեորիայում դուք միշտ կտեսնեք, յերբ հարցի հետ կծանոթանաք և բավականաշախ միջամուլ կլինեք նրա մեջ, միշտ կտեսնեք զանազան դասակարգերի պայքար իրար գեմ, պայքար, վորն արտացոլում ե կամ իր արտահայտությունն ե գտնում պետության վերաբերյալ տեսակետների պայքարում, պետության գերի և նշանակության դնահատականում:

Այս հարցին ավելի գիտականորեն մոտենալու համար հարկավոր ե թեկուղ թուուցիկ պատմական հայացք ձգել այն բանի վրա, թե ինչպես ե պետությունն առաջացել և ինչպես ե նա զարդացել: Հասարակական գիտության հարցում ամենից հուսալին ու անհրաժեշտ՝ վորպեսզի իրոք ձեռք բերես այդ հարցին ճիշտ մոտենալու հմտություն և չկորչես ահաղին մանրութների կամ պայքարող կարծիքների հակայական բազմազանության մեջ—ամենից կարեորը, վորպեսզի այդ հարցին մոտենաս գիտական տեսակետից, այն ե՝ չմոռանալ հիմնական պատմական կապը, յուրաքանչյուր հարցի նայել այն տեսակետից, թե ինչպես յերեւոյթ պատմության մեջ ծագել, իր զարգացման ընթացքում ինչպիսի գլուխոր ետապներ ե անցել այդ յերեւոյթը և նրա այդ զարգացման տեսակետից նայել, թե ինչ ե դարձել տվյալն այժմ:

Ես հույս ունեմ, վոր պետության հարցի շուրջը դուք նկանակության ենդեմի, «Բնուանիքի, մասնավոր սեփակա-

նության և պետության ծագումը» աշխատության հետ: Դա—ժամանակակից սոցիալիզմի հիմնական յերկերից մեկն է, վորի յուրաքանչյուր քրաղին կարելի յե վերաբերվել վստահությամբ, վստահ լինելով, վոր յուրաքանչյուր քրաղը ասված ե վոչ թե վայրիվերո, այլ գրված ե պատմական ու քաղաքական հոկայտական նյութի հիման վրա: Կասկած չկա, մըր այդ աշխատության բոլոր մասերն ել միատեսակ մատչելի ու հասկանալի չեն շարադրված: դրանցից միքանիսը պահանջում են այնպիսի ընթերցող, վորն արդեն ունի վորոշ պատմական ու տնտեսագիտական դիտելիքներ: Սակայն նորից եմ ասում՝ չպետք ե շինութվել, յեթե այդ աշխատությունը կարգալով միանդամից չհասկանաք: Այդ գրեթե յերբեք վոչ վոքի հետ չի պատահում: Սակայն հետապայում, յերբ վերաբանալով նրան հետաքրքրությունը կարթնանա, ձեռ կհաջողվի հասկանալ նրա զերակցող մասը, յեթե վոչ ամբողջը լիովին: Այդ գրքի մասին հիշեցնում եմ նրա համար, վոր նա հարցին ճիշտ մոտեցում ունի նշված տեսակետից: Գիրքն սկսվում ե պատմական ակնարկով պետության ծագման մասին:

Այս հարցին ճիշտ մոտենալու համար, ինչպես և ամեն հարցի, որին կատարալիքմի, մարդկանց միջև շահագործման ծավալան հարցին, սոցիալիզմին, այն բանին, թե ինչպես հանդես յեկալ սոցիալիզմը, ինչպիսի պայմաններ ծնեցին նրան—ամեն մի այլպիսի հարցի կարելի յե հաստատ կերպով, վստահությամբ մոտենալ միայն պատմական հայացք ցցելով նրա վողջ զարգացման վրա, ամբողջությամբ առած: Այդ հարցում ամենից առաջ պետք ե ուշագրություն զարձնել այն բանին, վոր պետությունը դոյտություն և ունեցել վոչ միշտ: Յեղել ե ժամանակ, յերբ պետություն չի յեղել: Նա յերեւն և գալիս այսուղ և այն ժամանակ, վորտեղ և յերբ հանդես ե գալիս հասարակության բաժանումը զասակարդերի, յերբ հանդես են գալիս շահագործողները և շահագրծվողները:

Մինչև այն ժամանակ, յերբ սկսվեց մարդու կողմից մարդուն շահագործելու առաջին ծեր, դասակարգերի՝ ստըրկատերերի և սորուկների բաժանմելու առաջին ծեր, մինչ այդ դեռ դոյտություն ուներ նահապետական, կամ—ինչպես յերեմն անվանում են—կլանային (կլան—տոհմ, ցեղ, յերբ

մարդիկ ապրում եյին ցեղերով, տահմերով) ընտանիքը, և
այդ նախագարյան ժամանակների հետքերը բավական վո-
րոշակի մասել են նախագարյան շատ ժողովուրովների կեն-
ցալում, և յեթե զուք վերցնեք փորեւ աշխատություն նախ-
նալարյան կուտառայի վերաբերալ, ապա միշտ ել կհան-
դիպեք քիչ թե շատ վորոշակի նկարագրությունների, ցու-
ցումների ու հեղողությունների, փոր յեղել և ժամանակ՝
քիչ թե շատ նման նախագարյան կոմունիզմի, —յերբ չի
յեղել հասարակության բաժանումն սորկատերերի և ասրուկ-
ների: Յեկ այդ ժամանակ պետություն չի յեղել, չի յեղել
հասուկ ապարատ սխսեմատիկ կերպով բանություն դործա-
դրելու և մարդկանց բանության յենթարկելու համար: Այդ-
պիսի ապարատն ե ահա, վոր կոչվում ե պետություն:

Նախագարյան հասարակության մէջ, յերբ մարդիկ
գեուս ապրում եյին ցեղերով, գտնվելով իրենց զարգացման
ամենաստորին աստիճանների վրա, պայրենության մոտ վիճա-
կում, այն եպօխայում, վորից ժամանակակից քաղաքակերթ
մարդկությունը բաժանվում է միքանի հազարամյակներով—
այն ժամանակ պետության գոյության նշաններ գեուս չեն
յերեսում: Մենք տեսնում ենք սովորութների տիրապետու-
թյուն, հեղինակություն, հարգանք, իշխանություն, վոր
ունեյին ցեղի ալաղները, տեսնում ենք, վոր այդ իշխանու-
թյունը յեղել է կանանց ձեռքին*), —այն ժամանակ կնոջ
դրությունը նման չեր այժմյան իրավագուրկ, կեղեքված
դրության, —սակայն վոչ մի տեղ չենք տեսնում մարդկանց
հասուկ շարակարգ, վորոնք առանձնանում են, վորպեսզի
ուրիշներին կառավարեն և վորպեսզի յենելով կառավարման
շահերից ու նպատակներից, սխսեմատիկարար, շարունակ
ունենան հարկադրման վորոշ ապարատ, բանության ապա-
րատ, վորպիսին ներկայումս հանդիսանում են, ինչպես զուք
բոլորդ դիտեք, զորքերի դինված ջոկատները, բանուերը և
ուրիշի կամքը բանության յենթարկելու այլ միջոցները—այն,
ինչ կարում ե պետության յությունը:

Յեթե մի կողմ թողիննք այն այսպես կոչված կրոնա-

*) Այսուեղ նկատի յե առնվում հասուկ հասարակակարգ, վազը
կոչվում և ամայապետություն և զոյություն և ունեցել մէքանի
ժողովարդների մէջ: Խմբ:

կան ուսմունքները, խորամանկությունները, վիլիսովայական
կառուցումները, այն զանազանակերպ կարծիքները, վոր
սուղծում են բուրդուական գիտնականները և վորոնենք դոր-
ծի խելական եյությունը, ապա կտեսնենք, վոր պետությունը
հանդում ե հենց այդպիսի, մարդկային հասարակությունից
առանձնացված կառավարման ապարատի: Յերբ հանդես ե
գալիս մարդկանց այդպիսի հատուկ խումբ, վորն զբաղված ե
միայն նրանով, վորպեսզի կառավարի, և վորը կառավարման
համար կարիք ունեն հարկադրման, ուրիշի կամքը բոնության
յենթարկելու հատուկ ապարատի՝ բանուերի, մարդկանց
հատուկ ջոկատների, զորքերի և այլն,—այդ ժամանակ հան-
դես ե գալիս պետությունը:

Սակայն յեղել է ժամանակ, յերբ պետություն չի յեղել,
յերբ ընդհանուր կապը, ինքը հասարակությունը, կարդա-
պահությունը; աշխատանքի կարգուկանոնը պահպանվել ե
ուվարության, տրադիցիաների ուժով, այն հեղինակությամբ
կամ Հարդանքով, վոր ունեյին ցեղի ավագները կամ կանայք,
վորոնք այն ժամանակ հաճախ ունենում եյին վոչ միայն
տղամարդկանց հետ իրավահավասար, այլ հաճախ նույնիսկ
ամելի բարձր գիւղը, և յերբ մարդկանց հատուկ շարս-
կարդ, զեկավարելու համար մասնագետներ չկային: Պատ-
մությունը ցույց ե տալիս, վոր պետությունն իբրև մարդ-
կանց հարկադրման հատուկ ապարատ առաջացել է միայն
այսուղ և այն ժամանակ, վորտեղ և յերբ հանդես ե յեղել
հասարակության բաժանումը զառակարգերի, այսինքն՝ բա-
ժանումը մարդկանց այնպիսի խմբերի, վորոնցից վոմանք
շարունակ կարող են յուրացնել ուրիշների աշխատանքը, վոր-
տեղ մեկը շահագործում է մյուսին:

Յեկ հասարակության այս բաժանումը դասակարգերի՝
պատմության մէջ պետք է մեր առաջ միշտ սպազ կանգնած
լինի, ինչպես հիմնական փաստ: Մարդկային բոլոր հասարա-
կությունների զարգացումը հաղարամյակների ընթացքում
անխորի բոլոր յերկրներում՝ այդ զարգացման ընդհանուր
որինաչափությունը, կանոնագորությունն ու հաջորդակա-
նությունը մեջ այնպիս և ցույց տալիս, վոր սկզբում յեղել
և առանց զանազանակերպ հասարակություն—սկզբնական նա-
հապետական, նախագարյան հասարակություն, վորտեղ
աղջավականություն չի յեղել. այսուհետեւ՝ հասարակություն,

Հիմնված ստրկության վրա, ստրկատիրական հասարակություն։ Դրա միջով և անցել ամբողջ ժամանակակից քաղաքակրթ Յելը ուղան—յերկու հաղար տարի սրանից առաջ ստըրկությունը յեղել է կատարելապես տիրապետող։ Դրա միջով և անցել մյուս՝ աշխարհամասերի ժաղովուրդների հոկայական մեծամասնությունը։ Այլի սակավ գարզացած ժողովուրդների մոտ ստրկության հետքերը դեռ այժմ ել մնացել են, և ստրկության հիմնարկություններ, որինակ, Աֆրիկայում, դուք կդանեք նաև այօմ։ Ստրկատերեր և ստրուկներ—ահա առաջին խոչոր բաժանումը զասակարգերի։ Առաջին խումբը տիրել ել վոչ միայն արտադրության բոլոր միջոցներին—հողին, գործիքներին, վորքան ել սրանք այն ժամանակ պրիմիտիվ լինելին, այլ նա տիրել են նաև մարդկանց։ Այլ խումբը կոչում եր ստրկատերերի խումբ, իսկ նրանք, ովքեր աշխատում եյին և աշխատանքը տալիս ուրիշներին, կոչում եյին ստրուկներ։

Այդ ձեխն պատմության մեջ հաջորդում ե ուրիշ ձև՝ ճորտատիրական իրավունքը։ Ստրկությունը խոչոր մեծամասնություն կազմող յերկներում զարդանալով դառնում է ճորտատիրական իրավունք։ Հասարակության հիմնական բաժանումն ե՝ ճորտատեր-կալվածատերեր և ճորտ գյուղացիներ։ Մարդկանց միջև հարաբերությունների ձևը փոխվում է։ Ստրկատերերն ստրուկներին համարում եյին իրենց սեփականությունը, որենքը հաստատում եր այդ հայացքը և ստրուկներին դիմում եր իրեն մի իր, վորն ամբողջովին պատկանում է ստրկատերովը։

Ճորտ գյուղացու նկատմամբ ուժի մեջ և մնում դաստկարգային կեղեգումը, կախվածությունը, սակայն ճորտատեր-կալվածատերը չեր համարլում գյուղացու՝ ինչու տերը, տերը, այլ միայն իրավունք ուներ նրա աշխատանքի վրա և նրան հարկադրելու կատարել վորոշ պարհակներ։ Վրականում, ինչպես դուք բոլորդ դիմում, ճորտատիրական իրավունքը, մանավանդ Ռուսաստանում՝ վորոշով նա շատ այլի յերկար մնաց և ընդունեց շատ ավելի կոպիտ ձևեր, այն վաշնչով չեր տարբերվում ստրկությունից։

Այնուհետև՝ առևտրի զարդացման, համաշխարհային շուկայի ստեղծման հետ զուգընթաց, դրամական շրջանառության զարգացման հետ զուգընթաց ճորտատիրական հա-

ստրակության մեջ առաջ եր գալիս նոր դասակարգ՝ կապիտալիստների դասակարգը։ Ապրանքից, ապրանքների փոխանակությունից, դրամի իշխանության առաջացումից առաջ եր գալիս կապիտալի իշխանությունը։ XVIII դարի ընթացքում, այլելի ճիշտ՝ XVIII դարի վերջից սկսած և XIX դարի ընթացքում տեղի ունեցան հեղափոխություններ ամբողջ աշխարհում։ Ճորտատիրությունը դուրս մղվեց Արևմտյան Յեղափայի բոլոր յերկներից։ Ամենից ուշ այդ կատարվեց Ռուսաստանում։ 1861 թ. Ռուսաստանում նույնականացվեց համարվեց հեղաշրջում, վորի հետևանքը յեղավ հասարակության մի ձեւի վոխարինումը մյուսով՝ ճորտատիրության փոխարինումը կապիտալիզմով, վորի ժամանակ դասակարգային բաժանումը մնաց, մնացին ճորտատիրական իրավունքի զանազան հետքերն ու մնացուկները, սակայն հիմնականում դասակարգային բաժանումն այլ ձև նաև նատացալ։

Կապիտալի տերերը, հողատերերը, Փարբիկների ու գործարանների տերերը բոլոր կապիտալիստական պետություններում ներկայացրել են և ներկայացնում են աղդաբնակության չնչին փոքրամասնությունը, վորն ամբողջովին տնութինում և բովանդակ ժողովրդական աշխատանքը և հետևապես պահում ե իր անորինության տակ կեղեգման ու շահագործման մեջ աշխատավորների ամբողջ մասսային, վորոնց մեծամասնությունը հանդիսանում են պրոլետարներ, վարձուանվորներ, վորոնց արտադրության պրոցեսում ստանում են ապրուստի միջոցներ՝ միմիայն վաճառելով իրենց բանվորական ձեռքերը, բանվորական ուժը։ Դեռևս ճորտատիրության ժամանակ բաժան-բաժան յեղած ու ճնշված գյուղացիները, կապիտալիզմի անցման հետևանքով, դառնում եյին մասմբ (մեծամասնությունը) պրոլետարներ, մասմբ ել (փոքրամասնությունը) ունեոր գյուղացիություն, վորն ինքն եր վարձուանվորներ և իրենից ներկայացնում եր գյուղական բուրժուազիա։

Այդ հիմնական փաստը՝ հասարակության անցումն ստրկության նախնական ձեռքից գեպի ճորտատիրություն և, վերջապես, գեպի կապիտալիզմ՝ դուք պետք ե միշտ նկատի ունենանք, վորովհետեւ միայն հիշելով այս հիմնական փաստը, միայն այս հիմնական քրծանակի մեջ զնելով բոլոր քաղաքական ուսմունքները, դուք ի վիճակի կլինեք ճիշտ

զնահատելու այդ ուսմունքները և պարզելու, թե ինչի հետ
առնչություն ունեն նրանք, վրավիճակ մարդկային պատ-
մության այդ խոչոր ժամանակաշրջաններից յուրաքանչյու-
րը՝ սորբատիրականը, ճորտատիրականը և կապիտալիստա-
կանը՝ ընդգրկում են տաճայակ ու հարյուրավոր դարեր և
հերկայացնում են քաղաքական ձեւերի, զանազան քաղաքա-
կան ուսմունքների, կարծիքների, ենթափոխությունների մի
այնպիսի բազմություն, վոր գլուխ հանել այդ ամբողջ ծայ-
րահեղ խայտարղեառությունից ու հակայական բազմազանու-
թյունից, —վորը առանձնապես կապված է բուրժուական-
դիտնականների ու քաղաքաղեառների քաղաքական, փիլիսո-
փայական և այլ ուսմունքների հետ, —կարելի յէ միայն այն
դեպքում, յեթե իբրև զեկավար հիմնական թել հաստատա-
պես պահպաննենք հասարակության այդ դասակարգացյն բա-
ժանումը, դասակարգացյն տիրապետության ձեւերի փակո-
խումը և այդ տեսակետից վերլուծենք բոլոր հասարակական
հարցերը՝ տեսասական, քաղաքական, հոգեւոր, կրոնական
և այլն:

Յեթե գուք այդ հիմնական բաժանման տեսակետից նա-
յեք գիտության վրա, ապա կտեսնեք, վոր մինչեւ հասարա-
կության դասակարգերի բաժանմվելը, ինչպես յես արդեն
ասել եմ, գոյություն չի ունեցել նաև պետությունը։ Սա-
կայն վորչափով ծագում և ամրապնդվում ե հասարակության
բաժանումը դասակարգերի, վորչափով ստեղծվում ե դասա-
կարգային հասարակությունը, նույն շափով ել ծագում ու
ամրապնդվում և պետությունը։ Մարդկության պատմու-
թյան մեջ կան տաճայակ ու հարյուրավոր յերկրներ, վորոնք
ապրել են և այժմ ապրում են սորբկություն, ճորտատիրու-
թյուն և կապիտալիզմ։ Դրանցից ամեն մեկում՝ չնայած աւելի
ունեցած խելական պատմական փոփոխություններին, չնայած
բոլոր քաղաքական պերիպետիաներին ու բոլոր եղանակներու-
թյուններին, վորոնք կապված են յեղել մարդկության այլ
զարգացման հետ, սորբկությունից ճորտատիրության միջո-
ցով կապիտալիզմին անցնելու և կապիտալիզմի դեմ ուղղված
այժմ յան համաշխարհային պայքարին անցնելու հետ, —գուք
միշտ տեսնում եք պետության ծագումը։ Դա միշտ հանդի-
մաշ իրավում է պահպան միշտ պահպան պահպանից, վորոնք

զբաղվում ենին միայն նրանով, կամ զբաղեք միայն նրանով,
կամ զիսավորապես նրանով, վորակեսի կառավարեն։ Մար-
դիկ բաժանմում են կառավարողների և կառավարման մաս-
նագետների՝ նրանց, ովքեր հասարակությունից վեր են
բարձրանում և վորոնց անվանում են կառավարողներ, պե-
տության ներկայացուցիչներ։ Այդ ապարատը, ուրիշներին
կառավարող մարդկանց այդ խմբակը միշտ իր ձեռքի և վերց-
նում հարկադրման, Փիղիկական ուժի վրու ապարատ, —
միշտնույն ե, արտահայտվում և արդյոք այդ բռնությունը
մարդկանց նկատմամբ նախադարյան դաշտակով, կամ
սարկության եղանակայում—սպելի կատարելագործված տիպի
սպատակինումով, թե հրազենով, վորը հանդիս յեկավ
միջին գորերում, թե վերջապես ժամանակակից
վենքով, վորը XX դարում հասավ տեխնիկական հրաշը-
ների և ամբողջովին հիմնված և ժամանակակից տեխնիկայի
վերջին նվաճումների վրա։ Բնության ուրումները փոխութիւն-
են, սակայն միշտ ել, քանի պետությունը յեղել է, յուրաքան-
չուր հասարակության մեջ գոյություն են ունեցել մի հումք
մարդկի, վորոնք կառավարել են, վարոնք հրամայել են,
իշխել են և իշխանությունը պահելու համար իրենց ձեռքում
ունեցել են Փիղիկական հարկադրման ապարատ, բռնության
սպառատ, այն պատապինման ապարատը, վոր համապատաս-
խան և յեղել յուրաքանչյուր դարաշրջանի տեխնիկական մա-
կարդակին։ Յեկ թափանցելով այդ ընդհանուր յերեսութնե-
րի մեջ, մեկ հարց տալով, թե ինչու պետությունը գոյու-
թյուն չի ունեցել, յերբ զսասկարգեր չեն յեղել, յերբ չեն
յեղել շահագործողներ ու շահագործվողներ, և ինչու առաջ
և յեկել, յերբ ստեղծվել են դասակարգելը, —մենք միայն
ապրանք ենք զանում վորոշակի սկառափառիան պետության
եյության և նրա նշանակության մասին զրգած հարցին։

Պետությունը՝ դա մի մեջենա յէ պահպանելու համար մի
պատակարգի տիրապետությունը մյուսի վրա։ Յերբ հասարա-
կության մեջ զսասկարգեր չկային, յերբ մարդկի մինչեւ
գոյություն սորբկական դարաշրջանն աշխատում էին մեծ հա-
մասարության նախադարյան պայմաններում, գեւես աշ-
խատանքի ամենացածր արտադրողականության պայմաննե-
րում, յերբ նախադարյան մարդը գծվարությամբ եր իր հա-
մար գտնում այն միջոցները, վորոնք անհրաժեշտ եյին ամե-

նաբիրտ նախնաղարյան գոյության համար, այն ժամանակ առաջ չեր դավիս և չեր ել կարող առաջ դավ կառավարման համար հատկապես առանձնացված և մնացած ամբողջ հասարակության վրա իշխող մարդկանց հատուկ խմբակ: Միայն այն ժամանակ յերեան յեկավ հասարակության դասակարգային բաժանման առաջին ձևը, յերբ յերեան յեկավ ստրկությունը, յերբ մարդկանց վորոշ դասակարգ կարող եր, համախմբվելով յերկրագործական աշխատանքի ամենակոպիտ ձևերի շուրջը, արտադրել վորոշ ավելցուկ, յերբ այդ ավելցուկը աբովյուստ կերպով չե, վոր անհրաժեշտ եր ստրկի ամենաաղքատիկ գոյության համար և ընկնում եր ստրկատիրոջ ձևուքը, յերբ, այդպիսով, ամրապնդվեց ստրկատիրերի այդ դասակարգի գոյությունը, և վորպեսդի նա ամրապնդվեր, անհրաժեշտ եր, վոր հանդես գար պետությունը:

Յեկ նա՝ ստրկատիրական պետությունը հանդես յեկավ, մի ապարատ, վորը ստրկատերերի ձեռքն եր տալիս իշխանությունը, բայցը ստրուկներին կառավարելու հնարավորությունը: Թե՛ հասարակությունը և թե՛ պետությունն այն ժամանակ շատ ավելի մանր եյին, քան այժմ, ունեյին կապի անհամեմատ ավելի թույլ ապարատ—այն ժամանակ չկային հաղորդակցության այժմ յան միջոցները: Լեռները, դետերն ու ծովերը հանդիսանում եյին չափազանց մեծ խոչընդոտներ, քան այժմ, և պետության կազմավորումը կատարվում եր աշխարհագրական շատ ավելի նեղ սահմաններում: Տեխնիկապես թույլ պետական ապարատն սպասարկում եր համեմատաբար նեղ սահմաններ և գործողությունների նեղ ընդունեցող պետությանը: Սակայն այդուհանդերձ, կար մի ապարատ, վորն ստրուկներին հարկադրում եր մնալ ստրկության մեջ, հասարակության մի մասը պահում եր մյուսի հարկադրանքի, կեղեքման տակ: Զի կարելի հասարակության մի գերակշռող մասին հարկադրել սիստեմատիկարար աշխատելու մյուս մասի վրա, առանց հարկադրման մշտական ապարատ ունենալու: Քանի գեռ դասակարգեր չկային՝ չկար և այդ ապարատը: Յերբ հանդես յեկան դասակարգերը, ամենուրեք և միշտ այդ բաժանման անման ու ամրացման ձեռ միասին յերեան եր գալիս նաև հատուկ ինտուիտա՝ պետությունը: Գետության ձևերը չափազանց բազմազան եյին: Ստրկատիրական ժամանակներում այն ժամանակի վա-

համար ամենից ավելի առաջավոր, կուլտուրական և քաղաքակիրթ յերկներում, որինակ, չին չունաստանում և չոռում, վորոնք ամբողջովին հիմնված եյին ստրկատիրության վրա, մենք աենում ենք արդեն պետության զանազան ձևեր: Այդ ժամանակ արդեն առաջանում ե տարբերություն միավետության և հանրապետության միջև, արիստոկրատիայի և դեմոկրատիայի միջև: Միապետությունը՝ իբրև մեկի իշխանություն, հանրապետությունը՝ իբրև վորեւ վոչ-ընտրովի իշխանության բացակայություն. արբստոկրատիան՝ իբրև համեմատաբար վոչ մեծ փոքրամամության իշխանություն, դեմոկրատիան՝ ինչպես ժողովրդի իշխանություն (դեմոկրատիա տառացի, հունարենից թարգմանված հենց նշանակում ե՝ ժողովրդի իշխանություն): Այդ բոլոր տարբերությունները ծագել են ստրկության եպոխայում: Զնայած այդ տարբերություններին, ստրկատիրական եպոխայի ժամանակների պետությունը ստրկատիրական պետություն եր՝ միենույն ե, թե արդյոք դա յեղել ե միապետություն, թե արիստոկրատիան կամ դեմոկրատիան հանրապետություն:

Հին ժամանակների պատմության ամեն մի կուրսում, ունենդրելով դասախոսություն այդ առարկայի մասին, զուք կլսեք այն պայքարի մատին, վոր յեղել և միավետական ու հանրապետական պետությունների միջև, սակայն հիմնականըն այն է յեղել, վոր ստրուկները մարդ չեն համարվել. վոչ միայն քաղաքացիներ, այլ և մարդ չեն համարվել: Հոռմեյական որենքը նրանց իր եր համարում: Սպանության վերաբերյալ որենքը, չխոսելով արդեն մարդու անձնավորությունը պահպանող ուրիշ որենքների մասին, ստրուկներին չեր վերաբերյում: Նա պաշտպանում եր միայն ստրկատերերին, վորոնք միայն ճանաչված եյին, իբրև իրավագործ քաղաքացիներ: Սակայն յեթե հիմնադրվում եր միավետություն, զա լինում եր ստրկատիրական հանրապետություն: Դրանցում բոլոր իրավունքներով ոգտվում եյին ստրկատերերը, իսկ ստրուկներն որենքով իր եյին, և նրանց նկատմամբ հնարավոր եր վոչ միայն ուղածդդ բռնությունը, այլև ստրկի սպանությունը հանցանք չեր համարվում Ստրկատիրական հանրապետությունը տարբերվում եյին իրենց ներքին կազմակերպությամբ. կային արիստոկրատա-

կան և գեմով լրատական հանրապետությունները : Արքատակա-
տական հանրասիառության մեջ ընտրություններին ժամանակ-
ցում եյին սակալաթիվ արտօնյալները, սակայն դարձյալ
բոլոր սորակատերերը, բոլորը, բացի ստրուկներից : Այս
հիմնական հանդամանքը պետք է նկատի ունենալ, վորով-
հետեւ այն ամենից ավելի շատ և բայց սփռում պետության
հարցի վրա և պարզ ցույց և տալիս պետության ելությունը :

Պետառթյունը մեքենա յէ մի դասակարգ մյուսի կողմէից կեսով կեզեքելու համար, մեքենա, մնացած ստորապատճեցի կեզեքելու համարը Այդ մեքենայի ձեր զանազան և լինում: Սարկածի բական պետության ժամանակ մենք տեսնում ենք միապետություն, արքատիրատական հանրապետություն կամ նույնիսկ գեմոկրատական հանրապետություն: Կառավարման ձեւը իրոք չափազանց զանազանակերպ եցին լինում, սակայն գործի եյտթյունը մնում էր միենալոյնը՝ ստրուկները վոչ մի իրավունք չունեցին և մնում եցին իրեն ճնշված դասակարգ, նրանց մարդ չէին համարում: Եռույնը տեսնում ենք մենք նաև ճորտատիրական պետության մեջ:

Ծանազործման ձևի փոփոխությունն ստրկատիրական պեսությունը դարձնում էր ճորտատիրական։ Այս հակայական նշանակություն ուներ։ Ստրկատիրական հասարակության մեջ՝ ստրկի լիակատար իրավագրկում, նաև մարդկար համարվում։ Ճորտատիրականում՝ գյուղացու կապվածությունը հողին։ Ճորտատիրական իրավունքի հիմնական հատկանիշն այն է, որ գյուղացիությունը (իսկ այն ժամանակ գյուղացիները կարմում եյին մեծամասնություն, քաղաքացին բնակչությունը շատ թույլ եր զարգացած) համարվում եր հողին ամրացված, այստեղից ել առաջացել է հենց այդ ճորտատիրական (քրոպօշտու) իրավունք հասկացողությունը։ Գյուղացին վորոշակի քանակությամբ որեր կարող եր հր համար աշխատել այն հողամասում, վոր նրան առաջի եր կապվածառերը, մյուս որերին ճորտ գյուղացին աշխատում եր տիրոջ համար։ Դասակարգացին հասարակության եյությունը պահպանվում էր՝ հասարակությունը հենվում եր զասակարգացին շահագործման վրա։ Իրավագոր կարող եյին լինել միայն կալվածառերերը, գյուղացիները համարվում եյին իրավագուրիկ։ Գործնականում նրանց դրու-

թյունը շատ քիչ եր տարբերվում սարկատիրական պետության ստրականինքի դրությունից : Սակայն այլուհանգերձ նրանց ազատագրման համար, գյուղացիների ազատագրման համար բացցվում եր ավելի լայն ճանանգարշ, վորովհետեւ ճորտ գյուղացին չեր համարվում կարգածատիրոջ անմիջական սեփականությունը : Նա կարող եր ժամանակի մի մասն անցկացնել իր հողամասում, կարող եր, այսպես առաջ՝ վորոշչափով պատկանել ինքն իրեն, և փոխանակության, տուերական հարաբերությունների ղարգացման ավելի լայն հնարավորության պայմաններում ճորտատիրական իրավունքն ավելի ու ավելի յեր կազմակուծվում և շարունակ ավելի յեր լայնանում գյուղացիության ազատագրման ըրջանակը : Ճորտատիրական հասարակությունը միշտ ել ավելի բարդ և յեղել, քան ստրկատիրական հասարակությունը : Նրա մեջ կարտեստի, արդյունաբերության գարգացման խոչը տարր, վորպիսի հանդամանքը դեռ այն ժամանակ մղում եր զեղիկի կապիտալիզմ : Միջին ղարերում ճորտատիրական իրավունքը գերակշռում եր : Այսուղ ել պետության ձեւերը բազմազան ելին, այսուղ ել մենք տեսնում ենք թե՛ միապիտություն, թե՛ հանրապետություն, թե՛ շատ ավելի թույլ արահարաված, սակայն միշտ ել իշխող ճանաւզել են յեղակիորեն միայն կարգածատիր-ճորտատերերը : Ճորտ գյուղացիներն ամեն տեսակի քաղաքական իրավունքների բնագավառում բաշարակացես տեղ չունեցին :

թե՛ սորկատիքության ժամանակ, թե՛ ճորտատիբական իրավունքի ժամանակ մարդկանց վորչ մեծ փոքրանանության տերապետությունը նրանց հոկայտկան մեծամասնության վրա չեղ կարող գլուխ գտալ առանց հարկադրման։ Ամբողջ պատմությունը լիքն է կեզեքված զասակարգերի անընդհատ փորձերով՝ զեն չպրաելու կեղեքումը։ Մարդկության պատմությունը գիտի շատ տասնամյակներ տևող պատերազմներ հանուն սորկությունից ազատագրման։ Ի միջն այլոց «սպաշտականներ» անունը, վոր այժմ վեցցրել են Գերմանիայի կումունիստները^{*)}—զերծանական այդ մեխակ կուսակցությու-

*) Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը կազմել է դեռևս իմպերիալիստական պատերազմի ժամանակ պահպան առաջ և Ազգային Միություն -ից (4. Ինքնիշխան Տակենակ Պր.): Առաջին

նը, վոր իրոք պայքարում ե կազիտալիզմի լծի գեմ—այդ անունը նրանք վերցրել են նրա համար, վոր Սպարտակը յեղել է սրանից մոտ յերկու հաղար տարի առաջ տեղի ունեցած՝ սարուկների ամենախոշոր ապատամբություններից մեկի ամենաականավոր հերոսներից մեկը: Մի շաբաթ տարիների ընթացքում ամբողջովին ստրկության վրա հիմնած և կարծես թե ամենաակարող հոռմեյական կայսրությունը ցնցումներ ու հարվածներ եր կրում սարուկների հսկայական ապատամբությունից, վորոնք դինվում ու համախմբվում ենին Սպարտակի առաջնորդությամբ, կազմելով ահագին բանակ: Վերջիվերջո նրանք ջախջախավեցին, բոնվեցին և տանջանքների յենթարկվեցին ստրկատերերի կողմից: Այդ քաղաքացիական պատերազմներն անցնում են դասակարգացին հասարակության դուռքյան ամբողջ պատմության միջով: Յես հիմա բերեցի այդպիսի քաղաքացիական կոիններից ամենախոշորի որինակն ստրկատիրական եղուսայից: Ճորտատիրական իրավունքի ամբողջ երոխան նույն չափով լիքն և գյուղացիների մշտական ապատամբություններով: Գերմանիայում, որինակ, միշին դարերում յերկու դասակարգերի՝ կալվածատերերի և ճորտերի պայքարը հասալ լայն չափերի և դարձավ գյուղացիների քաղաքացիական կուլ ընդդեմ կալվածատերերի: Զեղ բոլորի հայտնի յեն գյուղացիների այդպիսի բաղմաթիվ ապատամբությունների որինակներ կալվածատեր-ճորտատիրերի գեմ նաև Ռուսաստանում:

Իր տիրապետությունը պահելու համար, իր իշխանությունը պահպանելու համար կալվածատերը պետք ե ունենար ապարատ, վորը կհամախմբեր և նրան կենթարկեր հսկայական քանակությամբ մարդկանց, նրանց կենթարկեր վորոշորենքների, կանոնների—և այդ բոլոր որենքները հիմնականում հանդում եյին մի բանի—պահել կալվածատիրոջ իշխանությունը ճորտ գյուղացու վրա: Հենց այդ և ճորտատիրական պետությունը, վորը Ռուսաստանում, որինակ, կամ բոլորին հետամնաց տիփական յերկրներում, վորտեղ մինչեւ այժմ ճորտատիրությունն իշխում ե—ձեռով նա տարբերվել

համագումարում—1918 թ. գեկաների—1919 հունվարին—կուտակությունն ընդունեց գերմանական կոմանիստական կուտակություն (Սպարտակի Միություն), անունը և նոր:

Ե—յեղել և կամ հանրապետական, կամ միապետական: Յերբ պետությունը յեղել և միապետական՝ ճանաչվել և մեկի իշխանությունը. յերբ այն յեղել և հանրապետական՝ քիչ թիվա ընդունել և կալվածատիրական հասարակությունից ընտրվածների մասնակցությունը,—այս ճորտատիրական հասարակության մեջ: Ճորտատիրական հասարակությունը ներկայացնում եր դասակարգերի այնպիսի բաժանում, յերբ իսկական մեծամասնությունը՝ ճորտ գյուղացիությունը՝ մոլովին կախված եր չնչին վորքամասնությունից՝ կալվածատերերից, վորոնք տիրում են հոգին:

Առեւրի դարձացումը, ապրանքափոխանակության դարձացումն առաջացրեց նոր դասակարգ՝ կապիտալիստաների դասակարգը: Կապիտալիստեղից միջին դարերի վերջում, յերբ Ամերիկայի դյուտից հետո համաշխարհային առևտուրը հասուլ հսկայական զարդացման, յերբ մեծացավ թանկադին մետաղների քանակը, յերբ արծաթն ու վոսկին զարձան վրախանակության գործիք, յերբ դրամական շըշանառությունը հնարավորություն տվեց վոմանց ձեռքում պահելու հսկայական հարստությունները: Արծաթը և վոսկին հարստություններին համարվում ամբողջ աշխարհում: Սպառվում եյին կալվածատիրական դասակարգի տնտեսական ուժերը և զարգանում եր նոր դասակարգի՝ կապիտալիստեղիչների ուժը: Հասարակության վերակառուցումն այնպիսի եր կատարվում, վորպեսդի բոլոր քաղաքացիներն իր թիվառնան հավասար, վորպեսդի վերանանակին բաժանումը ստրկատերերի ու ստրուկների, վորովեսդի բոլորն որենքի առաջ հավասար համարվեն, անկախ նրանից, թե ով ինչ կապիտալ ունի՝ արդյոք հող՝ մասնավոր սեփականության իրավունքը, թե զա՝ տկնորներից մեկն ե, վորն ունի սոսկ աշխատող ձեռքեր—բոլորն որենքի առաջ հավասար են: Որենքը միատեսակ պաշտպանում ե բոլորին, պաշտպանում ե սեփականությունը, ով ել ունենա այդպիսին, սեփականության զեմուղյած վրանձդություններից այն մասսայի կողմից, վորը ուղղված վրանձդություններից չունինալոր վոյչնչ, բացի իր չունենալով սեփականությունն, չունինալոր վոյչնչ, բացի իր ձեռքերից, հետզհետեւ աղքատանում ե, սնանկանում ե և դառնում պրոլետարները: Այսպիս և կապիտալիստական հասարակությունը:

Յես չեմ կարող նրա վրա մանրամասն կանդ առնել: Այդ

Հարցին դուք դեռ կդառնաք, յերբ զըսւց ունենաք կուսակվածին ծրագրի մասին, —այնաեղ դուք կլսեք կապիտալիստական հասարակության ընութափիրը: Այս հասարակությունը արատության լուսնուկ դուրս յեկալ ճորտափրության դեմ, չին ճորտափրական իրավունքի դեմ: Սակայն դա արատություն եր նրա համար, ով սեփականություն ունի: Ենք յերբ ճորտափրական իրավունքը վոչնչացվեց, վորը տեղի ունեցավ XVIII դարի վերջին—XIX-ի սկզբին—Ռուսաստանում այդ կասարվեց ամելի ուշ, քան մյուս յերկրություն, 1861թ.—այն ժամանակ ճորտափրական պետությանը յեկալ փոխարինելու կապիտալիստական պետությունը, վորն իր լողունքն է հայտարարում համաժողովրդական պատությունը, առում և, թե ինքն արտահայտում է ամբողջ ժողովրդի կամքը, ժխտում և, վոր ինքը դասակարգային պետություն և, և այսաեղ ահա, ամբողջ ժողովրդի ազատության համար պայքարող սոցիալիստների և կապիտալիստական պետության միջին դարպանում և պայքար, վորն այժմ հանդել է նորհրդային սոցիալիստական համբառեալության պեղծման և վորն ընդգրկում է ամբողջ աշխարհը:

Համաշխարհային կապիտալի դեմ սկսած պայքարը հասկանու, կապիտալիստական պետություն եյտությունը հասկանու համար պետք է չփել, վոր կապիտալիստական պետությունը զուրաց գալով ճորտափրականի դեմ, մարտի յերդում ազատության լողունքով: Կապիտալիստական պետության ներկայացուցիչների համար ճորտափրական իրավունքի վերացումը նշանակում էր ազատություն և նրանց ծառայություն եր մատացում այնչափով, վորչափով ճորտափրական իրավունքը վոչնչացվում եր, և դյուղացիները հնարավորություն եյին սահմանում իրրել լիակատար սեփականություն տիրելու այն հոգին, վոր նրանք զնում եյին հետզնման միջցով, կամ հողի մի մասին—բահրայից, —դրա վրա պետությունն ուշաբրություն չեր դարձնում: Նա պահպանում էր սեփականությունը, ինչ նանապարհանք էր ուզում և այն ձեռք բերված լինի, վորովհետեւ ինքը հենվում էր մասնավոր սեփականության վրա: Ժամանակակից բոլոր քաղաքակիրթ պետություններում դյուղացիները դառնում եյին մասնավոր սեփականաւերել: Պետությունը պաշտպանում էր

մասնավոր սեփականությունը և այնուեղ, վորութիւն կարմածատակը հողի մի մասը տալիս եր գյուղացուն, պիտությունը վարձատում էր նրան հետպնման, փողով վաճառելու միջոց: Պետությունն ասես թե հայտարարում էր մենք կոահապանենք լիակատար մասնավոր սեփականությունը, և նրան պանենք լիակատար մասնավոր սեփականությունը: Ենք յոյտ հասարակությունը՝ հիմնաված մասնավոր սեփականության վրա, կապիտալի իշխանության վրա, բոլոր չունեոր բանների և դյուղացիների մասնավոր մասնաների կատարյալ հպատակության վրա, —այդ հասարակությունն իրեն հայտարարում էր տիրապետող՝ ազատության հիման վրա: Պայքարելով ճորտափրական իրավունքի դեմ, նա սեփականությունը հայտարարեց ազատ և առանձնապես հպատակությունը նրանով, վոր իր թե պետությունը դադարել և պատարացին լինելուց:

Մինչդեռ պետությունն ինչպես առաջ մնում էր նույն այն մեքենան, վորը կապիտալիստներին ողնում և ամենաչքափոր գյուղացիներին ու բանվոր գտասակարգին հպատականության մեջ պահելու, սակայն արտաքուստ նա ազատ էր: Նա հայտարարում է ընդհանուր ընտրական իրավունք, իր զինակիցների, քաղաքովչների, գետնականների ու փիլիսոփաների բերնով հայտնում ե, վոր ինքը դասակարգային պետություն չե: Անգամ այժմ, յերբ նրա դեմ սկսվել է նորհրդատությունը: Վային սոցիալիստական հանրապետությունների պայքարը, նրանք մեկ մեղադրում են այն բանը, թե իրը մենք ազատության խախտողներ ենք, թե իրը մենք կառուցում ենք հարկադրանքի, մեկը մյուսին նշելու վրա հիմնաված պետություն, իսկ իրենք ներկայացնում են համաժողովրդական, զեմոկրատական պետություն: Ահա, պետության վերաբերյալ այս հարցն այժմ, յերբ ամբողջ աշխարհում սկիզբ է առ պետություններում, և չենց այն ժամանակ, յերբ հեղափոխությունը հազթանակում է միքանի յերկրներում, յերբ առանձնապես սրբել է պայքարն ընթացեմ համաշխարհային կապիտալի, —պետության հարցն սահցել և ամենամեծ նշանակությունը և դարձել է, կարելի յէ ասել,

ամենահիվանդու հարցը, այժմ է յականության բոլոր քաղաքական հարցերի և բոլոր քաղաքական վեճերի կիզակեալ:
Ինչ կուսակցություն ել մենք վերցնելու լինենք Ռուսաստանում կամ վորևէ ավելի քաղաքակրթված յերկրում, դրեթե բոլոր քաղաքական վեճերը, տարածայնություններն ու կարծիքները հիմա պատում են պետության հասկացողության շուրջը: Հանդիսանո՞ւմ և արդյոք պետությունը կապիտալիստական յերկրում, դեմոկրատական հանրապետության մեջ, — մանաւանդ այնպիսին, ինչպես Շվեյցարիան կամ Ամերիկան, — ամենաաղատ դեմոկրատական հանրապետություններում, հանդիսանո՞ւմ և արդյոք պետությունը ժողովրդական կամքի արտահայտիչը, համաժողովրդական վորոշման ամփոփումը, ազգային կամքի արտահայտությունը և այլն, — թե պետությունը մի մեջքնա յե նրա համար, վորպեսզի այնտեղի կապիտալիստները կարողանան պահել իրենց իշխանությունը բանվոր դասակարգի և դյուզացիության վրա: Սա հիմնական հարց է, վորի շուրջն այժմ պատում են քաղաքական վեճերն ամբողջ աշխարհում: Ի՞նչ են ասում բայլենիզմի մասին: Բուրգուական մամուլը հայցոյում և բայլշևիլիներին: Դուք չեք դանի վոչ մի թերթ, վորը չկրկներ բայլշևիկների գեմ ուղղված այն ընթացիկ մեղադրանքը, թե նրանք հանդիսանում են ժողովրդապետության խախտողները: Յեթե մեր մենշևիկներն ու սոցիալիստ-հեղափոխականները միամտարար (իսկ կարող ե պատահել և վոչ միամտարար, կամ կարող ե պատահել՝ այդ այնպիսի միամտություն և, վորի մասին ասված և, թե այդ դողությունից ել վատթար և) կարծում են, թե իրենք են հանդիսանում բայլշևիկների գեմ ուղղված այն մեղադրանքի հայտնագործողներն ու դյուտարանները, թե նրանք խախտել են աղատությունն ու ժողովրդապետությունը, ապա նրանք ամենածիծառելի կերպով մոլորգում են: Ներկայումս ամենահարուստ յերկրների ամենահարուստ թերթերի մեջ չկա վոչ մեկը, վորոնք դրանց տարածման համար գործադրում են տասնյակ միլիոններ և տասնյակ միլիոն որինակներով ցանում են բուրժուական սուսու իմպերիալիստական քաղաքականություն—այդ թերթերի մեջ չկա և վոչ մեկը, վոր չկրկներ բայլշևիկմի գեմ ուղղված այդ հիմնական փաստարկումներն ու մեղադրանքները՝ թե Ամերիկան, Անգլիան և Շվեյցարիան, — դրանք ժողովրդապե-

առության վրա հիմնված առաջակոր պետություններ են, իսկ բայլշևիկյան հանրապետությունն ավաղակների պետություն է, վոր նա աղատություն չի ճանաչում և վոր բայլշևիկները հանդիսանում են ժողովրդապետության խախտողները և անգամ հասել են մինչ այնտեղ, վոր ցըել են ուշբեդիլիան: Բայլշևիկների գեմ այս զարդուրեկի մեղադրանքները մեզ ամբողջովին մոտեցնում են այն հարցին, թե ի՞նչ բան է պետությունը: Վորպեսզի այդ մեղադրանքները հասկանանք, վորպեսզի դրանցից դլուխ հանենք և միանդամայն գիտակցաբար վերաբերվենք դրանց, և գլուխ հանենք վոր միայն լսածների հիման վրա, այլ ունենալով հաստատ կարծիք, պետք ե պարզ հասկանանք, թե ի՞նչ ե պետությունը: Այստեղ ժենք տեսնում ենք ամեն տեսակի կապիտալիստական պետություններ և սրանց պաշտպանող այն բոլոր ուսմունքները, վոր ստեղծվել են մինչև պատերազմը: Հարցի լուծմանը ճիշտ մոտենալու համար հարկավոր ե քննադատաբար վերաբերվել այդ բոլոր ուսմունքներին ու հայացքներին:

Յես արդեն ձեղ իբրև ոգնություն մատնաշել եմ Ենգելսի «Ընտանիքի», մասնակիոր սեփականության և պետության ծագումը» աշխատությունը: Հենց այդտեղ ասվում է, վոր յուրաքանչյուր պետություն, վորտեղ գոյություն ունի հողի և արտադրության միջոցների մասնավոր սեփականություն, վորտեղ իշխում ե կապիտալը, ինչքան ել նա դեմոկրատիկ լինի, նա կապիտալիստների ծեռքին՝ բանվոր դասակարգը և չքավոր գյուղացիությունը հպատակության մեջ պահելու համար: Վերաբերյալ ընդհանուր ընտրական իրավունքը, Սահմանադիր ժողովը, պարլամենտը—այդ միայն ձև է, յուրատեսակ մի ժողովը, պարլամենտը—այդ միայն ձև է, յուրատեսակ մի ժողովի, վորն ամենաին դործն ըստ եյության չի փութաւ:

Պետության տիրապետության ձևը կարող ե տարբեր լեռներ. այստեղ, վորտեղ կա այսինչ ձևը, կապիտալ այս կերպ և հայտարերում իր ուժը և այլ կերպ, վորտեղ ձևն այլ և, սակայն ըստ եյության իշխանությունը մնում է կապիտալ ձեռքին. լինի ցենզային թե այլ իրավունք, լինի գեմոկրատական հանրապետություն, և նույնիսկ վորքան նա ավելի գեմոկրատական և, նույնքան ավելի կոպիտ, ավելի ցինիկ և կապիտալիզմի այդ տիրապետությունը: Աշխարհիս ամենա-

դեմոկրատիկ հանրապետություններից մեկը Հյուսիս-Ամերիկյան Միացյալ Նահանգների են, և վոչ մի տեղ այլպես, ինչպես այդ յերկրում (ով այնուհետ յեղել է 1905 թ. հետո, նա անշուշտ պատկերացնում է ազդ), վոչ մի տեղ կապետալի իշխանությունը, մի բուռն մէլիքարդատերերի իշխանությունն ամբողջ հասարակության վրա չի արտահայտվում այնպես կոստարար, այնպիսի բացահայտ կաշառումով, ինչպես Ամերիկայում։ Կապիտալիզմ, քանի նա դրություն ունի, իշխում և ամբողջ հասարակության վրա և վոչ մի դեմոկրատական հանրապետություն, վոչ մի ընտրական իրավունք գործի ելությունը չեն փախում։

Ճորտափրական իրավունքի համեմատությամբ դեմոկրատական հանրապետությունն ու ընդհանուր ընտրական իրավունքը հակացական պրոգրամ հանդիսացան. Նրանք պրոտարքատին հասարավորություն ամբին հանուլու այն համախմբման, այն ժիանուրման, վոր նա ունի, կազմելու այս կոռու, դիսցիլինայի յենթարկված շարքերը, վորոնք սիստեմատիկ պայքար են մղում կապիտալի՞ղիմ։ Վոչ մի նման բան, ուունիսկ մոտավորապես, չի ունեցել ճարտ զյուղացին, չխոսելով արգեն ստրուկների մասին։ Սորուկները, ինչպես մենք գիտենք, ապատամբում ենին, սարքում ենին բռնտեր, քաղաքացիական կոխիներ եյին սկսում, սակայն յերբեք չեյին կարող ստեղծել գիտակից մեծամասնություն, կուսակցությունների պայքարը դեկամարդներ, չեյին կարող պարզ հանկանալ, թե գեպի ինչ նպաստկ են զնում և անգամ պատմության ամենից ավելի հեղափոխական մոմենտներին միշտ զործիք եյին հանդիսանում տիրող դասակարգերի ձեռքին։ Տուրքուական հանրապետությունը, պարլամենտը, ընդհանուր ընտրական իրավունքը—այս բոլորը հասարակության համաշխարհային զարգացման տեսակետից հակարական պրոդրսու և ներկայացնում։ Մարդկությունը զնում եր դեպի կապիտալիզմ, և միայն կապիտալիզմը, չնորհիլ քաղաքացին կուտուրայի, պրոլետարների կեղծված դասակարգին հարավորություն տված գիտակցին իրեն և ստեղծել այն համաշխարհային բանիրական շարժումը, այն միլիոնավոր բանվորներին, վորոնք ամբողջ աշխարհում կազմակերպված են կուսակցությունների մեջ, —այն սոցիալիստական կուսակցությունները, վորոնք գիտակցարար գեկավարում են մաս-

ուների պայքարը։ Առանց պարզամենտարիզմի, առանց ընտրականության անհնարին կլիներ բանվոր դասակարգի այդ պարզացումը։ Ահա, թե ինչու այս բոլորն այսպիսի մեծ նշանակություն և սուցել մարդկանց ամենալայն զանգվածների աչքում։ Ահա, թե ինչու թեկումն այնպիսն զժվար և թվում։

Վոչ միայն յերեսպաշտները, գիտնականներն ու տերտերներն են սատարում ու պաշտպանում այդ բուրժուական կեղծիքը, թե պետությունն ազատ և կոչված և պաշտպանելու բոլորի շահերը, այլև մարդկանց մասսաները, վորոնք անկեղծորեն կրնում են հին նախապաշտրմունիքները և չեն կարողանում հասկանալ անցումը հին կապիտալիստական հասարակությունից գեսվի սոցիալիզմ։ Վոչ միայն բուրժուական զիստից անմիջական մեջ զանվող մարդիկ, վոչ միայն նրանք, ովքեր գտնվում են կապիտալի լծի տակ, կամ ովքեր կաշառված են այդ կապիտալից (կապիտալին ծառայում են ահազին թվով տանի տեսակ գիտնականներ, արվեստագետներ, տերտերներ և այլն), այլև մարդիկ, վորոնք սովոր գտնվում են բուրժուական ազատության նախապաշտրմունիքների աղքացության տակ, այդ բոլորն ամբողջ աշխարհում զինվեցին բայց լիքի նրա համար, վոր իր հիմնարկման ժամանակ նորհրզային հանրապետությունը գեն շղրսեց այդ բուրժուական կեղծիքը և բացելիրաց հայտարարեց՝ դուք ձեր պետությունը համարում եք ազատ, սակայն իրականում քանի ուն կա մասնակոր սեփականատիրություն, ձեր պետությունը, թեև նու լինի գեմոկրատական հանրապետություն, վոչ այլ ինչ և, յեթև վոչ մի մեքնա կապիտալիստների ձեռքին բանվորներին ճշշելու համար, և վորքան ավելի յե ազատ պետությունը, այսան ավելի պարզ և արտահայտում այլ։ Դրա որինակն ե՝ Շվեյցարիան Յելիրոպայում, Հյուսիս-Ամերիկյան Միացյալ Նահանգներն Ամերիկայում։ Վոչ մի ուղ կապիտալի չի իշխում այնքան ցինիկարար ու անպորտայն, և վոչ մի ուղ այդ չի յերես այնպես պարզ, ինչպես չենց այդ յերկրներում, թեև գրանք գեմոկրատական հանրապետություններ են, ինչքան ել դրանք չքեզ նաշխած լինեն, չայցած բոլոր խոսքերին՝ աշխատանքային գեմոկրատիայի, բոլոր քաղաքացիների համարապետության մասին։ Իրականում Շվեյցարիարար և Ամերիկայում իշխում է կապիտալի, և բանվորների բոլոր փոր-

Ժերն իբրևնց դրսության մեջ քիչ թե շատ զգալի բարեկավում մտցնելու համար հանդիպում են անհապաղ քաղաքացիական կովկի: Այդ յերկրներում զինվորները, մշտական դորք ավելի քիչ կա—Շվեյցարիայում դոյություն ունի միլիցիա, և յուրաքանչյուր շվեյցարացի իր տանը հրացան ունի, Ամերիկայում մինչեւ վերջին ժամանակներս մշտական զորք չկարուսուի և յերբ բանկվում ե բանադուլ, բուրժուազիան զինվում է, վարձում և զինվորներ ու ճնշում ե բանադուլը, և վոչ մի տեղ բանվորական շարժման այդ ճնշումը չի կատարվում այնպիսի անողոք դաժանությամբ, ինչպես Շվեյցարիայում ու Ամերիկայում և վոչ մի տեղ պարլամենտում կապիտալի աղդեցությունը չի զգացվում այնպես ուժեղ, ինչպես հենց այդտեղ: Կապիտալի ուժն ամեն ինչ է, բորսան ամեն ինչ է, իսկ ոլարյամենտը, ընտրությունները խրտվիլակներ են, տիկնիկներ: Սակայն քանի զնում, այնքան ավելի յեն բացվում բանվորների աչքերը, և այնքան ավելի լայն ե տարածվում Խորհրդային հյանանության դաշտափառը, մանավանդ այն արյունալի սպասնդից հետո, վորը մենք նոր հենց ապրեցինք: Բանվոր դասակարգի համար ավելի ու ավելի պարզ ե դառնում կապիտալիստների դեմ անողոք պայքար մղելու անհրաժեշտությունը:

ինչպիսի ձևերով եւ քողարկվի հանրապետությունը, թող դա լինի ամենազեմոկրատական հանրապետությունը, ուսկայն յեթե նա բուրժուական է, յեթե նրանում մնացել է հողի, գործարանների ու ֆարբիկների մասնավոր սեփականությունը և մասնավոր կապիտալի ամբողջ հասարակությանը պահում ե վարձու ստրկության մեջ, այսինքն՝ յեթե նրա մեջ չի իրագործվում այն, ինչի մասին հայտարարում են մեր կուսակցության ծրագիրն ու Խորհրդային սահմանադրությունը, ապա այդ պետությունը մեքենա յե՝ մեկին մյուսի կողմից կեղեքելու համար։ Ենվ այդ մեքենան մենք կվերցնենք այն դասակարգի ձեռքը, վոր պետք ե տապալի կապիտալի իշխանությունը։ Մենք զենք կզպրաենք բոլոր հին նախապաշտունքները, թե պետությունն ընդհանուր հավասարություն է, —այդ խարեցություն է —քանի զեռ կաշահագործում՝ հավասարություն չի կարող լինել։ Կարվաճատերը չի կարող հավասար լինել բանվորին, քաղցածը՝ կուշտին։ Այն մեքենան, վոր կոչվում եք պետություն, վոր

առաջ մարդկիկ կանգ են առնեամ մնահավաա հարցանքով և
հավատում են այն հին հեջաթեներին, վոր դա համաժողո-
վբրգական իշխանություն ե՝ այդ մեքենան պրակեարիատը
դեն և չպրում և ասում՝ զա բութուական սուս է։ Մենք
այդ մեքենան խիեցինք կապիտալիստներից, վեցըինք մեր
ձեռքը։ Այդ մեքենայով կամ դագանակով մենք կվոչնչացնենք
ամեն մի շահագործում, և յերբ աշխարհում չի մնա շահա-
գարծելու հնարավորություն, չեն մնա հողատերեր, ֆար-
բիկների տերեր, չի լինի այնպես, վոր վօմանք չափից գուրս
կըտանան, իսկ մյուսները սովատանջ լինեն, միայն այն ժա-
մանակ, յերբ զբա համար հնարավորություններ չեն մնա՝
մենք այդ մեքենան կլարդենք։ Այդ ժամանակ չի լինի պե-
տություն, չի լինի շահագործում։ Ահա մեր կոմունիստական
կուսակցության տեսակետը։ Հույս ունեմ, վոր հաջորդ դա-
ստիոսություններում մենք կանդրազանանք այս հարցին և
հաճախակի։

Առաջին ամպամ տպագրված է 1920թ. Տպագրված է բառ Ցեղական 2-րդ
հունվարի 18-ին «Պրազդ»-ին առ. կը ՀԿՎ ԽԿԿ կ. սեպտեմբերի,
№ 16-ամ: կը 362-377.



Digitized by srujanika@gmail.com

Հեղինակ. Խոմըն. Ա. Զ.

Արքապահ Ա. Տ.-Մկրտչյան

Quercus № 2975. Листья. № 28, № 7662 (р.). Ствол 1000;

15. 12. 1964. 23 Chambers Rd., 1282 ft.

Առաջնային և արտադրակիոն ՀՀ մեզահմբերի 1953 թ.
Առաջնային և արտադրակիոն ՀՀ հակամմբերի 1952 թ.

תְּבִשָּׁה - תְּבִשָּׁה

Chloris is distinguished from *Luzula* by its ligule.



R. V. Wilson (pp. 5)

4000 ft. 1000 m.

U.S. Geological Survey

Digitized by srujanika@gmail.com

0001 Եացի, (յ) 2005 ամիսը՝ 80 դրամով հաշվի պահպան

Ա 2003 պացիենտ 32 ամ. կապության և հայտնաբերված
Ա 8395 պացիենտ 2 առաջընթաց է հայտնաբերված:

«Ազգային գրադարան»



ML0180488

ФНБ 25 4.

807

А
А

В. И. Ленин

О ГОСУДАРСТВЕ

Лекции в Свердловском университете 11 июля 1919 г.

Издательство ЦК КП(б) А

Партиздрат. Эривань 1932